

ՊՈԼՍՈՅ "ԺԱՄԱՆԱԿ" ԵՒ "ՄԱՐՄԱՐԱ" ԹԵՐԹԵՐԸ ԿԸ ՀԱՂՈՐԴԵՆ

Կաթուղիկ Միաբանութիւններէն եւ ընկերութիւններէն նեօ-Քաթէֆումէններու խումբը, Պէյօղլուի Ս. Անթուան եկեղեցւոյ մէջ, եւ Ֆօֆօլարիէն խումբը Պիւլուֆտէրէի լատին եկեղեցւոյ մէջ, իսկ Սալէզիէններու Միաբանութիւնը եւ Միսիոններու Իտէնթաս Սպանիական Միաբանութիւնը Հարպիյէի Ս. Էսփրի Քաթիտրալի եւ Մեծ Կղզիի "Օրաթորիօ" ակումբներուն մէջ թափ տուած են միսիոնարական լայն աշխատանքներու: Թիրախ ընտրելով ի մասնաւորի Հայ

Առաքելական եւ Ասորի Ուղղափառ պատանիներն ու երիտասարդները: Հայոց Պատրիարքական Աթոռի Կրօնական Ժողովը, 7 Մայիս 1992 թուակիր նամակով, բացատրութիւն պահանջած է Հայր Լուի Փլաթրէն, որ ներկայիս Պապական Փոխանորդ նշանակուած է, եւ որուն նպիսկոպոսական ձեռնադրութիւնը հաւանական է որ Իսթանպուլի մէջ տեղի ունենայ: Ներկայիս Թուրքիոյ մէջ կը պաշտօնավարեն չորս Կաթուղիկ նպիսկոպոսներ: